



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

''04'' օգոստոս 2014 թ.

թիվ 51-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՄԱՐԶԻ (ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ) ՁԵՎ ԹԻՎ 4 ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի երրորդ մասի ե) կետով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

Հաստատել՝

ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում «Մարզի (տարածաշրջանի) Ձև թիվ 4 ամփոփ տեղեկագիրը»՝ համաձայն հավելվածի:

Ցուցումներ մարզի (տարածաշրջանի) ամփոփ տեղեկագրի լրացման վերաբերյալ

1. Տարածաշրջանի ամփոփ տեղեկագիրը (**Ձև թիվ 4**) լրացնում և ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձին է հանձնում ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններում ԳՀՀ աշխատանքները համակարգողը՝ հաշվառման տեղամասերի վարիչներից գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերն ընդունելուց հետո:

Եթե տարածաշրջանի մեջ մտնում են և՛ քաղաքային, և՛ գյուղական համայնքներ, ապա լրացվում են երկու ամփոփ տեղեկագրեր՝ մեկը քաղաքների, մյուսը՝ գյուղերի համար:

2. Մարզի ամփոփ տեղեկագիրը (**Ձև թիվ 4**) լրացնում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններում ԳՀՀ աշխատանքները համակարգողը՝ մարզային գործակալության պետի մասնակցությամբ՝ ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձանցից գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերն ընդունելուց հետո:

Եթե մարզի մեջ մտնում են և՛ քաղաքային, և՛ գյուղական համայնքներ, ապա լրացվում են երկու ամփոփ տեղեկագրեր՝ մեկը քաղաքների, մյուսը՝ գյուղերի համար:

3. Մարզի ամփոփ տեղեկագրում տեղեկությունները լրացվում են ըստ **յուրաքանչյուր տարածաշրջանի**:

4. Մարզի (տարածաշրջանի) ամփոփ տեղեկագրում տեղեկությունները լրացվում են ըստ **յուրաքանչյուր քաղաքային կամ գյուղական համայնքի**:

5. Եթե քաղաքային կամ գյուղական համայնքը բաժանված է երկու և ավելի հաշվառման տեղամասերի, ապա սկզբում գրառվում են տվյալ համայնքի յուրաքանչյուր հաշվառման տեղամասի հանրագումարներն ըստ հաջորդականության, այնուհետև՝ տվյալ քաղաքային կամ գյուղական համայնքի հանրագումարներն ամբողջությամբ:

6. Եթե հաշվառման տեղամասի մեջ ներառված են մի քանի քաղաքային կամ գյուղական համայնքներ, ապա սկզբում լրացվում են քաղաքային կամ գյուղական համայնքի վերաբերյալ հանրագումարները, այնուհետև՝ հաշվառման տեղամասի հանրագումարները:

7. Եթե քաղաքային համայնքի ենթակայության տակ կա(ն) գյուղական բնակավայր(եր), ապա այդ բնակավայր(եր)ի տվյալները պետք է ներառվեն գյուղական ամփոփ տեղեկագրում:

Այդպիսի դեպքերի համար կատարվում է համապատասխան գրառում քաղաքի համար կազմված ամփոփ տեղեկագրի դիմային էջի «Ծանոթություն» ստորում:

8. Մարզի (տարածաշրջանի) ամփոփ տեղեկագիրը (**Ձև թիվ 4**) կազմվում է հաշվառման տեղամասերի (**Ձև թիվ 3**) ամփոփ տեղեկագրերի համապատասխան տվյալների հիման վրա, ընդ որում **Ձև թիվ 4-ի**՝ «Հաշվառված է հաշվարարների կողմից» 1-ին բաժնում պետք է գրառվեն **Ձև թիվ 3-ի** 1-ին բաժնի տվյալները, իսկ 2-րդ բաժնում՝ «Հանրագումարը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջայցը»՝ **Ձև թիվ 3-ի** 2-րդ բաժնի տվյալները:

9. Տարածաշրջանի ամփոփ տեղեկագրի՝ «Վերահսկիչ շրջայցի արդյունքների ամփոփագիր» բաժինը լրացվում է հաշվառման տեղամասերի ամփոփ տեղեկագրի համապատասխան տվյալներն ամփոփելով:

Մարզի ամփոփ տեղեկագրի՝ «Վերահսկիչ շրջայցի արդյունքների ամփոփագիր» բաժինը լրացվում է տարածաշրջանի ամփոփ տեղեկագրի համապատասխան տվյալներն ամփոփելով:

10. Կազմված ուղեկցող թերթերի ընդհանուր քանակի վերաբերյալ տվյալները ստացվում են **Ձև թիվ 3-ի** համապատասխան տվյալներն ամփոփելով:

11. Համոզվելով, որ փաստաթուղթը ճիշտ է կազմված՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային (տարածքային) գործակալության (բաժնի) պետը (պատասխանատու անձը) գրում է ամսաթիվը և ստորագրում այն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության 2014 թվականի
գյուղատնտեսական համատարած հաշվառում

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2014 թվականի օգոստոսի 4-ի թիվ 51- Ա որոշմամբ

քաղաքային

Ձև թիվ 4-----*(որը պետք չէ, ջնջել)*

գյուղական

Մարզում (տարածաշրջանում) ներառված հաշվառման տեղամասերի քանակը

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՄԱՐԶԻ (ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ)

Մարզ-----Տարածաշրջան-----

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գյուղատնտեսական համատարած հաշվառման ժամանակ հաշվարարի կողմից սխալ գրառումներ են կատարվել տնտեսության գյուղատնտեսական նշանակության հողերի և/կամ գյուղատնտեսական կենդանիների վերաբերյալ տեղեկատվության լրացման ժամանակ											
Գյուղատնտեսական նշանակության հողեր, <i>հա</i>						Գյուղատնտեսական կենդանիներ, ընդամենը <i>գլուխ / հատ</i>					
Վարելա- հող	Պտղա- տու այգի	Հատա- պլտ- դանոց	Խաղողի այգի	Խոտ- հարք	Արոտա- վայր	Խոշոր եղջերավոր անասուն- ներ	որից՝ կովեր	Խոզեր	Ոչխար- ներ	Այծեր	Թռչուն- ներ
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>	<i>7.</i>	<i>8.</i>	<i>9.</i>	<i>10.</i>	<i>11.</i>	<i>12.</i>

Ընդամենը կազմվել է Ուղեկցող թերթ **(Ձև թիվ 5)**-----

Ծանոթություն-----

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ՝ ԸՍՏ ՄԱՐԶԻ (ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ)

Հաշվառման տեղամասի համարը	Քաղաքի կամ գյուղական համայնքի անվանումը	Հրահանգչական տեղամասերի քանակը	Հաշվային տեղամասերի քանակը	Ամփոփ տեղեկագրի թերթերի քանակը		Լրացված հաշվառման հարցաթերթերի քանակը	Լրացված հարցաթերթերի հավելվածների քանակը	ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ (տվյալ համայնքում / բնակավայրում)										
				Ձև թիվ 2	Ձև թիվ 3			Գյուղատնտեսական նշանակության հողեր, <i>հա</i>					Գյուղատնտեսական կենդանիներ, ընդամենը <i>գլուխ / հատ</i>					
								Վարելահող	Պտղատու այգի	Հատապտղանոց	Խաղողի այգի	Խոտհարք	Արոտավայր	Խոշոր եղջերավոր անասուններ	որից՝ կովեր	Խոզեր	Ոչխարներ	Այծեր
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	13.	14.	15.	16.	17.	18.	19.

1. ՀԱՇՎԱՌՎԱԾ Է ՀԱՇՎԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ընդամենը																			

2. ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱՅՑԸ

Ընդամենը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջայցը																			